

## Տեղեկատվություն

<<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի 2015թ-ի մարտ ամսի կատարված աշխատանքները

2015թ-ի Աշխատանքային պլան-ծրագրով նախատեսված աշխատանքներից բաժիններում կատարվել են հետևյալ աշխատանքները՝ պահպանության բաժնի կողմից ԱՊ-ի ռեժիմի բնապահպանական խնդիրների հիմնական դրույթների մասին պարբերաբար տեղական լրատվական միջոցներով տեղեկացվել է ազգաբնակչությանը՝ համապատասխան նյութեր են տրամադրվել <<Դիլիջան>> քաղաքային և մարզային թերթերին: Որսագողության, ապօրինի հատումների, արածեցման, ապօրինի շինությունների, հողազավթումների և հրդեհների դեմ պայքարելու նպատակով քաղաքում և գյուղական համայնքներում ազգաբնակչության հետ կազմակերպվել են հանդիպումներ և ժողովներ:

ԱՊ-ի աշխատակիցների հետ անց են կացվել խորհրդակցություններ և սեմինարներ: Հրդեհավտանգ ժանանակրջանում <<Դիլիջան>> ԱՊ-ի տարածքներում հսկողությունը ուժեղացնելու և հակահրդեհային միջոցառումները առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով պահպանության բաժնի աշխատակիցների կողմից կազմվել է հակահրդեհային միջոցառումների ծրագիր, որը հաստատվել է Տավուշի մարզպետի կողմից:

2015թ-ի մարտ ամսում պահպանության բաժնի աշխատակիցների կողմից հայտնաբերվել է ապօրինի հատված 126 ծառ, որոնց համար կազմվել է 15 անտառխախտման արձանագրություն որոնք ուղարկվել են ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժնի՝ ընթացք տալու: <<Դիլիջան>> ազգային պարկ-ի առավելագույնս դժվար պահպանվող տարածքներում պահպանության բաժնի և մասնաճյուղերի աշխատակիցների ուժերով կազմակերպվել են հերթապահություններ: <<Հաղարծին տեղամաս>> մասնաճյուղում տնօրենի հրամանի հիման վրա կազմակերպվել է արտահերթ ստուգողական ստուգում:

Գիտական բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել է <<Դիլիջան>> ազգային պարկի բույսերի և կենդանիների տնտեսական արժեքավոր տեսակների պոպուլացիաների, բույսերի համակեցությունների գերիշխող տեսակների բացահայտման , ուսումնասիրություններ, վայրի պտղատուների հիմնական տեսակների /հաճարի, կաղնի, բոխի/ ֆենոլոգիայի ուսումնասիրություններ:

Կատարվել են դասընթացների նախապատրաստում, <<Դիլիջան>> ազգային պարկ>>-ի տարածքում անհետացման վտանգի տակ գտնվող <<Ձնծաղիկ Միրզոնայի>> բուսատեսակի ուսումնասիրություն:

Ավարտվել են <<Դիլիջան>> ԱՊ-ի նորաստեղծ հինգ մասնաճյուղերի թեմատիկ քարտեզների պատրաստման և տպագրման, գնման մրցույթի փաստաթղթերի նախապատրաստման աշխատանքները:

Էկոտուրիզմի և ռեկրեացիայի բաժնի կողմից իրականացվել է <<ք. Դիլիջան – Ջուխտակ վանքեր - Մատուռ>> և <<ք. Դիլիջան – Հաղարծին վանք>> երթուղիները ներկայացնող սլայդ-շոուների պատրաստումը: Էկոտուրիզմի զարգացման նպատակով ձեռք է բերվել 2 հեռադիտակ, 10 ձեռնափայտ, 10 անջրանցիկ հագուստ և 6 ուսապարկ:

<<ք.Դիլիջան – Պարզ լիճ>> էկոերթուղում տեղեկատվական և կողմնորոշիչ ցուցանակների տեղադրման նպատակով համապատասխան կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր: Ներկայումս աշխատանքները ընթացքի մեջ են:

Մարտ ամսին ՀՀ բնապահպանության նախարարությունում քննարկվել է <<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի 2014թվականի կատարված աշխատանքների տարեկան հաշվետվությունը և գնհատվել բավարար:

Կազմակերպության կողմից կնքվել են 2015թ-ի վառելիքի, գրենական պիտույքների, տնտեսական ապրանքների գնման, ավտոտեխսպասարկման պայմանագրեր: